

որպես «*Ինքնին Գոյ*»³⁶ մարդոց կողմէ անկարելի է: Նաեւ մարդ, իր վախճանական ճակատագրով չի կրնար յաւիտենական Աստուածը ճանչնալ, որ իր վեհութեամբ ամեն բանէ վեր ու անվախճան է: Այստեղ, Փիլոն երբեք նկատի չէ առած Աստուծոյ ինքնայայտնութիւնը (անգլ.՝ Self-revelation), որ ընդունուած է յուդայական եւ քրիստոնէական կրօններուն մէջ:

Փիլոնի համաձայն, Աստուծոյ մասին կարելի է ըսել կամ արտայայտել միայն այն, ինչ որ ան չէ, այսինքն Աստուծոյ մասին մեր դրական արտայայտութիւնները չեն համապատասխաներ Աստուծոյ Էութեան: Այս պատճառով, փիլիսոփայ Փիլոն Ալեքսանդրացի կը նկատուի *Ժխտական Աստուածաբանութեան*³⁷ (Negative Theology) հնադարեան հիմնադիրներէն մէկը:

Անշուշտ Փիլոնի այս դիրքաւորումը լի է հակասութիւններով, որովհետեւ ան միաժամանակ Աստուծոյ որոշ յատկութիւնները կը հետեւցնէ անոր գերագոյն կատարելութենէն, ինչ որ ինքնին դրական արտայայտութիւններ են, միւս կողմէ չընդունիր դրական արտայայտութիւնները:

Որպէս եզրակացութիւն կարելի է հետեւցնել, որ մէկ կողմէն ունինք ստեղծուած, արարուած նիւթական աշխարհի մը եւ միւս կողմէն՝ անսկիզբ ու անվախճան Աստուած մը, որու Էութիւնը մեզի համար անիմանալի ու անըմբռնելի կը մնայ. այսուհանդերձ մարդիկ Աստուծոյ կու տան բնազանցական դրական յատկանիշներ (ինչպէս՝ «*Բացարձակ Գոյը*», «*Գերագոյն Առաքինութիւնը*», «*Գերագոյն Կատարելութիւնը*» կամ «*Գերագոյն Իմաստութիւնը*») եւ զինք կը բաժնեն մարդկային նիւթական աշխարհէն, որ Պլատոնի համաձայն նաեւ «*չարը*» կը խորհրդանշէ:

Նկատի ունենալով վերոյիշեալ *երկնային* (մտացածին, հոգեւոր, անսկիզբ ու անվախճան) աշխարհի ու *երկրային* (զգայական, երեւութական, նիւթական ու ստեղծուած) աշխարհի խիստ բաժանումը, Փիլոն կ'որոնէ ելք մը, որով կարելի ըլլայ ամենաբարի ու ամենակատարեալ Աստուծոյ եւ թերի ու անկատար աշխարհի միջնորդութիւնը:

36 «Ինքնին Գոյ» կամ «Ինքնին իր».-

«Ինքնին իր» նախասկրատեան ժամանակաշրջանէն ծանօթ փիլիսոփայական այս բառակապակցութիւնը կը նշանակէ՝ իրերը, ինչպէս որ իրենք գոյութիւն ունին, անկախ մեր գիտակցութենէն եւ մեր ճանաչողութենէն: Հայերէն «*Ինքնին իր*»ը, ինչպէս նաեւ անգլերէն՝ „in itself“, գերմաներէն՝ „an sich“ ֆրանսերէն եւ լատիներէն „per se“ թարգմանութիւններ են յունարէն „kath'auto“ բառակապակցութենէն:

Կանտ, «*Ինքնին իր*»ը կը կոչէ գերմ.՝ Ding an sich (անգլ.՝ Thing-in-itself), որ նման է լատիներէն հիմք ունեցող „noumenon“ եզրոյթին:

Անշուշտ բոլորովին տարբեր է «*իր՝ ինծի համար*» կամ «*իր՝ մեզի համար*» (գերմ.՝ Ding für uns կամ լատ.՝ phenomenon) բառակապակցութիւնները, որոնք կը նշանակեն՝ իրերը, ինչպէս որ իրենք բացայայտուած են մարդոց կամ մեր կողմէ, ճանաչողութեան մը գործընթացի ժամանակ:

37 Ժխտական Աստուածաբանութիւն (Negative Theology).-

Այս մասին տե՛ս Մաս-8, ԾԱՏՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ [Ծ-21] յօդուածը, Էջ 510: